Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

«Փա՛ռք Քրիստոսի ամենազօր Յարութեան»

Սիրելի ժողովուրդ հայոց ի սփյուռս աշխարհի.

Տոն է այսօր Հարության:

Ասպվածորդու թափուր գերեզմանից Արարչական Սիրո հաղթության լույսով ասպվածային փառքն է ճառագում՝ մեր շուրթերից դեպի երկինք բարձրացնելով փառաբանության աղոթքը հոգեբուխ. «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ» (Ելք ԺԵ 1):

Մեր հայացքի առջև Տիրոջ խաչելությունից շփոթահար ու սարսափած առաքյալներն են, վիմափոր գերեզմանը Փրկչի, երկյուղած հոգիներով յուղաբեր կանայք, որ լուսազգեստ հրեշտակներից Ավետիսն են լսում. «Ջի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ ասպ, այլ յարեաւ» (Ղուկ. ԻԴ 5-6):

Ամենայն Հայոց Միածնաէջ Մայր Աթոռից անհուն բերկրանքով «յարեաւ Քրիստոս» մեծասքանչ Ավետիսն ենք հղում և Հայրապետական մեր ջերմ ողջույնը բերում Առաքելական մեր Եկեղեցու նվիրապետության Աթոռների շնորհազարդ գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիո Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Կաթողիկոսին, Երուսաղեմի Հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կոստանդնուպոլսո Հայոց Ամենապատիվ Պատրիարք Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին, ուխտապահ ու նվիրյալ ողջ հոգևոր դասին, հավատավոր համայն մեր ժողո-

վերդին աշխարհի բոլոր կողմերում և Հայոց պետության ավագանուն՝ հանձինս Հայաստանի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանի, Ազգային Ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանի, վարչապետ Արամ Սարգսյանի:

Սիրելի բարեպաշտ հայորդիք.

Վերստին Տերունական հրավերք է խնդության, կանչված ենք մասնակից լինելու մահվանից դեպի կյանք, կորստից դեպի փրկություն տանող աստվածային անհաս խորին խորհրդին, որ մեզ՝ ամենքիս ընբռնելի է որպես Հարություն Մարդեղացյալ Աստվածորդու: Փրկագործության աստվածային առաքելության թագադրումն է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հարությունը, քանզի Աստված անապական ու անբավ իր սիրով ժամանակի մեջ մեզնից մեկը դարձավ և հանձն առավ խաչի ճանապարհը՝ անցնելով մահվանից դեպի կյանք, որպեսզի մեզ առաջնորդի կորստից դեպի փրկություն: «Ես եկի, զի կեանս ունիցին, և առատել եւս ունիցին» (Հովհ. Ժ 10):

Հարյավ Քրիստոս՝ խաչի ճանապարհը պսակելով կյանքի հաղթությամբ:

Հարյավ Քրիստոս՝ ընդմիշտ խորտակելով կապանքները դժոխքի ու մահվան:

Հարյավ Քրիստոս՝ և «տիեզերք ամենայն նորափետուր զարդարեցան»:

Փա՛ռք Քրիստոսի ամենազոր Հարությանը, որ հրաշակերտող իր խորհրդով 2000 տարի նորոգում է կյանքը Փրկչին հուսացյալ ժողովուրդների:

Փա՛ռք Քրիստոսի ամենազոր Հարությանը, որի հավատքի վեմին հաղթականորեն բարձրացավ Տիրոջ Տիեզերական Եկեղեցին: Նորացավ աշխարհը՝ Հարության հույսին խարսխված:

Ազատության, արդարության քրիստոնեական ընբռնումից, քրիստոնեական բարոյականի կենդանարար ակունքներից բխեցին համակեցության արդի քաղաքակրթության սկզբունքները՝ տարբեր տեսությունների մեջ, պատմական անցուդարձերում երկու հազարամյակ հղկվելով որպես մարդու և ժողովուրդների իրավունքների չափանիշներ: Քրիստոնեական վսեմ արժեքներով ծնունդ առան մարդկային մտքի, հոգու ու բազկի բյուր արարումներ՝ կենսավորելով ամենահաղթ սիրո Ավետարանական անանց ճշմարտությունը որպես պայման ու երաշխիք խաղաղության և հաշտության, կյանքի անընդմեջ զարգացման ու առաջընթացի:

Արդարև, որքան մխիթարական է «ճանաչել զՆա և զզօրութիւն Յարութեան Նորա», որ հաղթահարելով ժամանակ ու տարածություն, աստվածային Իր սիրով փշրում է մեղքի կարծրությունը մարդկային հոգիներում և պարգևում է շնորհը՝ ճըշմարտությունը ճանաչելու, և ազատությունը՝ ընտրելու Բարին ու դեպի Աստված տանող կենդանարար ուղին:

Փա՛ռք Քրիստոսի ամենազոր Հարության:

Տիրոջ առաքյալների քարոզության պատմական օրերից ընտրվեցինք որպես Աստծո «նոր ժողովուրդ» և նախախնամորեն շնորհին արժանացանք ճանաչելու Աստծո Սերը մեր հանդեպ ու Հարության հաղթանակող զորությունը մեր կյանքում:

ՈՏՆԼՎԱ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԶԱՏԿԱԿԱՆ ՔԱՐՈԶ ԽՈՍԵԼԻՍ

Հարության լուսեղեն խորհրդի դրոշմով ստացանք մեր ինքնությունը, Ավետարանով իմաստավորեցինք մեր գոյությունը, հավատացինք կյանքին, արդարին, գեղեցկին ու ստեղծարար աշխատանքին: Հարության հավատով վերագտել ենք դարավոր մեր երազը՝ ազգային մեր պետականությունը, և թեպետ տագնապներով ու համընդհանուր անվստահությամբ է լեցուն ներկան, Հարության հույսով ենք նայում գալիքին: Սա է մեր իրականությունը:

«Մի՛ երկնչիր, հօտ փոքրիկ»՝ ժողովուրդ հայոց: Մեկ անգամ չէ, որ անցել ենք խաչելության ճանապարհը ու չափել մահվան գուբի խորությունը: Եվ ամեն անգամ մեր հոգու հույսի կայծը կրակ է դարձել ու բոցավառվել՝ հառնելու մեր կամքը, հավերժի մեր ոգին: Մեր ժողովրդի հարության վկան է այս հողը, որին կանգնած ենք. վկան են ջրերը Եփրատի, շիկացած ավազը Տեր Զորի, որ անցնող դարասկզբին լեցուն էին հազարավոր հայերի անթաղ մարմիններով: Վկան են մեր տարագիր նախնիների ապրող սերունդները աշխարհասփյուռ: Հայ ժողովուրդը եղեռն է վերապրել: Սա նո՛յնպես մեր իրականությունն է:

«Ո՞ւր է մահ, յաղթութիւն քո» մահն արհամարհող հարցադրումով, կյանքի, հարության նույն հավատով և ինքնարթնության բոցավառ ոգով համախումբ՝ հայ ժողովուրդը ազատության իր իրավունքն է հաստատել Հայրենիքում և պաշտպանել արդարությունը Արցախում: Սա և՛ս իրողություն է, արդի մեր իրականության էական ու նշանակալի, մեծարժեք այն մասը, որի փառքը երբեք չի կարող խամրել: Սակայն, ո՛վ զարմանք, մարդկային կյանքի ինչպիսի՛ չարախնդություն՝ դժվարությունների, զրկանքների ու կորուստների տասնամյա ճանապարհն անցած հայրենաբնակ հայության նույն սերունդն այսօր լքում է Հայրենիքը: Հանուն Հայաստանի ու Արցախի ամեն զոհողություն ստանձնած սփյուռքահայը տարակույսներ ու վարանումներ է ապրում: Անհանդուրժողությունն ու անհաշտությունը, հեռանկարի անորոշությունը անպտուղ ու մահաշունչ անտարբերությամբ և հուսալքությամբ են համակում ազգային-հասարակական մեր կյանքը, իսկ աճող արտագաղթը Հայրենիքից դառնում է առօրեական ու սովորական: Այո, հասկանալի են բազմաթիվ արդարացումները, սակայն ո՛չ ընդունելի, ո՛չ արդարացի, քանզի սա մե՛ր իրականությունն է, և փախուստով չէ, որ պիտի շտկվի:

Սիրելի հավատավոր ժողովուրդ.

Նոր դարաշրջան է բացվում աշխարհի վրա՝ հասարակական կյանքի նորացող ընթացքով, ժողովուրդների ու պետությունների հարաբերությունների նոր պահանջներով: Ազգային զորեղ պետականությամբ միայն կարող ենք լիարժեք մասնակցություն ունենալ ժողովուրդների բազմակողմ ու հարաճուն համագործակցությանը: Ուրեմն, ո՛վ, եթե ոչ՝ մենք, հոգևորական ու աշխարհական բոլոր դասերով, ե՛րբ, եթե

ոչ՝ այսօ՛ր կոչված ենք զորացնելու ազատ ու անկախ մեր Հայրենիքը, միաբանվելու նրա շուրջ և համազգային միությամբ կերտելու հայ կյանքը աշխարհասփյուռ:

Հայրապետական Մեր խոսքն ենք ուղղում որպես պատգամ ու կոչ հայրենաբնակ մեր սիրեցյալ զավակաց՝ չերկմտել ազատությունն ընտրելու մեջ, բայց նաև՝ ազատությունը անկարգությանց պատրվակ չդարձնել: Նախանձախնդրորեն պահպանել գործելու արի կամքը, լավատեսության ոգին, մեր ժողովրդին հատուկ անընկճելի ստեղծարար ոգին, միմյանց ապավինելու վստահությունը, որպեսզի Հայրենիքը մեր դառնա կենդանարար արյուն մղող, տրոփող հուժկու սիրտը հայության կյանքի:

Հայրապետական հորդոր ենք հղում Հայ Եկեղեցու նվիրապետության Աթոռների գահակալներին, զինվորյալ ողջ հոգևոր դասին և սփյուռքի մեր հայրենասեր զավակներին, որ հավատավոր գործերով սատար լինեն Հայրենիքին, շարունակեն կիսել հայրենաբնակ իրենց քույրերի ու եղբայրների հոգսաշատ կյանքի դժվարությունները՝ իրենց արդար վաստակը շաղախելով նրանց քրտինքին ու մաքառմանը, հարազատ սրտի ջերմությունը փոխանցելով նրանց բեկյալ հոգիներին:

Սիրելիներ. մեկտեղենք մեր ջանքերը, նվիրումն ու սերը, որպեսզի Հարությամբ արշալույսվի յուրաքանչյուր օրը ազգային մեր կյանքի և մեր Հայրենիքի:

Հայրենիքին պարտք ենք ամենքս, մշտապես: Հայրենիքը միշտ իրավացի է՝ սիրելի և ինքնություն պարգևող իր զորությամբ, իր զավակներին միավորող խորհրդով: Հայրենիքի առջև զինաթափ ենք բոլորս:

Արդարև, ամենքս պարտք ունենք մեր պատմության ու մեր գալիքի առջև, ինքներս մեր՝ մեր ապրած դժվարին, բայց հույսով ու հավատով լի տարիների առջև, այս հողը մեզ համար շահած ու պահած մեր սուրբ նահատակների ու նախնյաց առջև, այս հողը մեզ շնորհած Բարձրյալն Աստծո առջև: Թերահավատությունը, սիրելիներ, մենք վաղուց մերժել ենք մեզանից: Արդ, չդրժենք սրբազան մեր ուխտը Արարատի ու Սուրբ Էջմիածնի հետ: Քաջակորով ու պատրաստակամ ստանձնենք մեր պատասխանատվությունը և ծառայության մեր բաժինը՝ հավատարիմ մեր Փրկչին, որ հոժարակամ երկնից երկիր խոնարհվեց ո՛չ «ծառայություն ընդունելու, այլ ծառայելու և իր անձը տալու որպես փրկություն աշխարհի» (Մատթ. Ի 28): Մեծահրաշ այս տոնին առաքյալների օրինակով, որ Հարությամբ գոտեպնդված՝ հին հանդերձի պես թոթափեցին հուսահատությունը և դարձան անվհատ ու անվեհեր քարոզիչներ, նորոգենք հավատը մեր հոգիներում՝ իբրև Աստծո հավատարիմ «նոր ժողովուրդ», որպեսզի սուրբ սրտով և անկեղծավոր հավատով տոնախմբենք 1700-ամյա փառաշուք տարեդարձը առաքելահաստատ ու առաքելագործ Հայ Եկեղեցու:

Սիրելի հայորդիք ի սփյուռս աշխարհի.

Եկեք ոտքի կանգնենք այս պահին բոլորս, որ ներկա ենք այստեղ՝ սրբազան այս Տաճարում, բոլորս, որ աստվածային անմահ Պատարագի արարողությանը մասնա-

կից ու հաղորդ ենք հեռասփռումով, և մեր հոգու հայացքը ուղղած երկինք՝ միասնաբար աղոթք բարձրացնենք առ Աստված՝ ասելով. Տե՛ր, Հարության սքանչելագործ խորհրդով զորացրո՛ւ հայրենյաց սիրո և ազգային միաբանության մեր ուխտը, որպեսզի չվարանենք միմյանց համար մխիթարություն լինել և գտնենք իրար՝ առանց փնտրելու: Քո ողորմության ներքո անվրդով ու խաղաղ պահիր Հայրենիքը մեր, Եկեղեցին ու ժողովուրդը հայոց: Պարգևի՛ր մեզ, Տե՛ր, Ճշմարտության Քո Հոգին շնորհազարդող՝ մեր գործերով Բարին ընտրելու, քանզի այնտեղ ես Քո օրհնությամբ, առատաբաշխ Քո պարգևներով, Քո Սիրով:

Ընդունի՛ր, ո՛վ Տեր, հավատարմության նորոգ ուխտը ազգիս հայոց, որ 2000 տարի Հարուցյալ Փրկչիդ ապավինած՝ ապրել է «եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ» (Հռոմ. Ը 31) վստահությամբ: Անսայթաք պահիր մեր ընթացքը «սիրեցէք զմիմեանս» աստվածային Քո պատվիրանի շավիղներում, առաջնորդի՛ր հայոց հոտիդ «փոքր ածուն» տրտմության հովիտներից առ արահետները խաղաղության, երջանկության և սիրո:

Արդ, սիրելիներ. հավատանք, զորակցենք ու սիրենք միմյանց, քանզի «Սէր ոչ երբէք անկանի»:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն յարուցեալ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան. ամէն»:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Փա՛ռք Քրիստոսի ամենազօր Յարութեան»: